

Ս. ԹԱԴԵՈՍ ԵՎ Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Նոյեմբերի 30-ին Հայ Առաքելական Ս. Եկեղեցին տոնեց Հայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչների՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը:

Տարիներ առաջ երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսը հայոց առաջին լուսավորիչների այս տոնը հռչակեց նաև կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների և քրիստոնեական դաստիարակության օր՝ իբրև քարոզչության և առաքելության խորհրդի ոգեկոչում:

Ձևավորված ավանդույթով, այդ օրը Հայաստանի տարբեր թեմերից Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին ժամանել կրոնի ուսուցիչներ: Մայրավանքում նրանք մասնակցեցին Ս. Պատարագի արարողությանը, հետո Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի նախաձեռնությամբ Գևորգյան հոգևոր ճեմարանում տեղի ունեցավ հանդիսություն:

Բացման խոսքում Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը նշեց, որ մերօրյա ուսուցիչներն առաջին լուսավորիչների առաքելությամբ քրիստոնեական հավատի լույսն են տարածում մատաղ սերնդի հոգիներում: Լսվեցին նաև բանախոսություններ «Հայ Եկեղեցին և դպրոցը», «Հայ հոգևոր երգը» թեմաներով:

Հանդիսության ավարտին գեղարվեստական գեղեցիկ հայտագրով ելույթներ ունեցան կիրակնօրյա դպրոցների սաները, ՔԴԿ-ի «Նավասարդ» երգչախումբը և ջութակահարների խումբը:

*

* *

Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը Արագածոտնի թեմի առաջնորդանիստ Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում սկսվեց Պատարագի արարողությամբ:

Տոնը շարունակվեց «Ս. Մեսրոպ Մաշտոց» դպրատանը, ուր տեղի ունեցավ փոքրիկ գիտաժողով՝ թեմի կրոնի ուսուցիչների մասնակցությամբ: Նրանց թիվն այսօր հասնում է 180-ի, որոնք քրիստոնեական ուսմունք ու պատմություն են դասավանդում թեմի տարածքում գործող բոլոր դպրոցներում:

Բացելով գիտաժողովը՝ Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը շնորհավորեց ուսուցիչներին՝ համեմատելով նրանց առաքյալների հետ:

Ապա գիտաժողովի բանախոսները՝ պրոֆեսորներ Բաբկեն Հարությունյանը, Էդուարդ Դանիելյանը և ատրվածաբանության դոկտոր Պետրոս Մալաքյանը, հանդես եկան առաքյալների՝Հայաստանում քարոզության պատմական վավերականության ապացույցներով:

Գիտաժողովից հետո ներկաներն ունկնդրեցին Արագածոտնի արվեստի դպրոցի երգչախմբի համերգը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ